203ա.: «Ի գաւառիս Գարդմանայ առ ոտս ուղիաճեմ և ա՛ծարդիւնական վարդապետիս Վանականի, որ փայլէ ի ժամանակիս որպէս զաստղ առաւօտու» 85բ: ԺԱՄԱՆԱԿ. 1223 թ. փրկչական. «ի ՈՀԲ թուարերութեւս մերմին ազանց»:

Նկարուած է 102ա. բնագիրը 8,3×9,3 սմ., մեր նկարը 8×9 սմ:

80. Ձեռագիրը սեպհականութիւն է Տրդատ եպիսկոպոս Պալեանի. Ա՛. բիսատոէլի Ստորոգութիւնք և Նիւսացու Յաղագս կազմութեան. թուղթ, ԳԻՐ. բոլորգիր: ԳՐԻՉ. Ստեփանոս գրիչ. ԺԱՄԱՆԱԿ. 1239 թ. փրկչական. «գրեցաւ ի թւ. ՈՁՀ»:

Երկրորդ մասը. (Նիւսացի) գրուած է նոյն գրչի ձեռքով 1244 թուին, Սմբատ արքայեղբայր Գունդստապլի խնդիրքով, Աւտանայում: «Գրեցաւ գիրս կազմութե՛ն հանճարայեղձ բանի, Գրիգորի ա՛ծխատ անձին, ձեռամբ Ստեփանոսի նուաստի անարուեստ գրչի և մեղապարտ անձին, ի խնդրոյ մեծ սպարապետին Հայոց Սմբատա, որդւոյ Կոստանդեա մեծ աթոռապահին հայոց և եղբաւր թագաւորին հայոց Հեթմոյ, որ և ատացաւ զսա ի յաղատ արդեանց իւրոց ի վայելումն իւր և իւրոցն և ի չիշատակ հոգւոյ իւրոյ յետ աստեացս. գրեցաւ սա ի թուականութե՛ս: ՈՂԱ: Ի թագաւորութեանս Հայոց Հեթմու և չիշխանութե՛ն իշխանաց իշխանին, հոգելից ծերոյն Կոստանդեա և ի հայրապետութեանն ա՛ն Կոստանդեա: Արդ գրեցաւ ի քաղաքս, որ կոչի Ատանա, ընդ հովանեաւ ս՛բ և յաւէտ զաւրավարին Թեոդոսի» 347բ:

Այս շրջանից է Սմբատ Գունդստապլի ձեռքով գրուած չիշատակարանները, որոնցից մէկն է 91ա, մեր նկարը:

81. Ազգային Մատ. կ. Պօլսոյ Հայոց, № 68. Աւետարան, նկարազարդ, ազնիւ մագաղաթ, 24×16 սմ. ԳԻՐ. երկաթագիր միջին, երկէջ, 17×5 սմ. չիշատակարանը արևելեան բոլորգիր (արևմուտքի համար հազուագիւտ): Կոստանդին կաթուղիկոսի ձեռքը սովորական բոլորգրով: ԳՐԻՉ. Յովհաննէս? (անունը գրուած է տողի գլխին և տարբեր թանաքով, որով և տարակուսելի. կարծում ենք, Թորոս Ռոսլինի դպրոցի գործ է): ՍՏԱՑՈՂ. Կոստանդին Ա. կաթուղիկոս Բարձրբերդցի, որ «ի սատացումն ս՛ը կտակարանաց անդանդաղ»: ՏԵՂ. «ի ս՛ը և յաշխարհամուտ յաթոռս Հռոմկլա, ընդ հովանեաւ ս՛ը Լուսաւորչին մերոյ և ա՛ծանելոյ ս՛ը Նշանիս»: ԺԱՄԱՆԱԿ. 1253 թ. փրկչական. «Արդ գրեցաւ ս՛ը աւետարանս, ի թուականութեանս հայոց: ՁԲ»:

Նկարուած է 574 եր. Ձիշատակարանից հատուած և Կոստանդին կաթուղիկոսի ձեռքը. (տես և Ալիշան Սիսուան 545):

82. Մատ. Երուս. Ս. Յակ. № 251. Աւետարան, ոսկէնկար. կաշէկազմ, Շղթայակրի ժամանակից. 27×19 սմ.: Մագաղաթ. ընտիր «մագդատ պայծառ». երկիջեան: ԳԻՐ. Հրաշալի բոլորգիր. ԳՐԻՉ. Թորոս Ռաւսլին?: Նկարիչ. Թորոս Ռաւսլին. «Ուստի և իմոյ անարժանութե՛ս Թորոսի, մականուն Ռաւսլին կոչնցելոյ հրաման տայր (Կոստանդին կաթ.) զդործի գրչութե՛ն ի գործ արկանել յա՛ծապարգի այս մատեան ս՛ը աւետարանիս, առատաձեռն ծախիւք, զանազան նիւթիւք և երկին երկին գունաւք վայելչացուցանել զսա, որ և ես ըստ կարի իմում լցի զփափաք նորա» 320ա: ՍՏԱՑՈՂ. Կոստանդին կաթուղիկոս. «Հրամանաւ և ծախիւք արի երջանկին և երիցս երանելոյ սըր-